Հավելված
**ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46** ծածկագրով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ-ի
հոկտեմբերի 23-ի թիվ 2 արձանագրության

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46**

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2 արձանագրությամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

| **Չ/Հ** | **Չափաբաժնի անվանումը** | **Մասնակցի անվանումը՝ ըստ հայտի ներկայացման հերթականության** | **Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Անհամապա-տասխանության համառոտ նկարագրությունն** |
|---|---|---|---|---|---|
| 1-ին | ԵՊՀ Ա. Մանուկյան 1 հասցեում գտնվող մարզահամալիրի տանիքին, Աբովյան 52ա մասնաշենքի տանիքին, Ծարավ Աղբյուրի 5 հասցեում գտնվող ԵՊՀ հանրակացարանի տանիքին, ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական, Ծաղկաձորի և Հանքավանի ուսումնաարտադրական բազաների տանիքներին արևային պանելների | «Արփիսոլար» ՍՊԸ | | X | «Արփիսոլար» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող հայտի ապահովումը ներկայացվել է վարկային կազմակերպության կողմից թողարկված երաշխիքի տեսքով, մինչդեռ հրավերով սահմանված է, որ հայտի ապահովումը կարող է ներկայացվել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տեղադրման աշխատանքներ | «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ներ | | X | Հավելված 1-ով ներկայացվող դիմում հայտարարության փաստաթղթում նշված է՝ «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ները հայտնում են, որ հանդես են գալիս թիվ 25/46 համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա, մինչդեռ հավելված N 1.1-ով ներկայացվող հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստման փաստաթղթում և հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկի փաստաթղթում բացակայում է մասնակցի համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա հանդես գալու վերաբերյալ տեղեկատվությունը |
| | | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | X | | |
| | | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | | X | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, ներառյալ հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկում բացակայում է ղեկավարի պաշտոնի վերաբերյալ տեղեկատվությունը: |
| | | Էկովիլ ՍՊԸ | | X | Էկովիլ ՍՊԸ-ի կողմից N 2-ով ներկայացվող գնային առաջարկի փաստաթղթում բացակայում է մասնակցի անվանումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ռուբինար ՍՊԸ | | X | Ռուբինար ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, ներառյալ հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկում բացակայում է Հրավերով պահանջվող փաստաթղթերի հավելվածների անվանումները: |

Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշվել և հայտարարվել են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| **Չափաբաժնի N** | **Մասնակցի անվանումը** | **Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X"** | **Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/** |
|---|---|---|---|
| 1 | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | X | 55,708,000.00 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ընտրություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանին:

**Հեռախոս՝** +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 05)
**Էլ. Փոստ՝** a.arakelyan@promotion.am
**Պատվիրատու՝** Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե